



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՐ



# ԱՐՀԱՆԴԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՑԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ  
ԴԻԿՏԱՏՈՐԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԱՆԴԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՃՐԻ

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.

१८८

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՐ



# ԱՐՅԱՆԻԹՑՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՎԱՐԴԱԼԱՀՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ  
ԴԻԿԱՆԱՑՈՒՐԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ


~~66802~~  
A ~~II~~  
25199

Թարգմ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՅԱՆԻԹՑՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՉՐԴԻ № 65

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.



ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ I ՏՄԱՐԱՆ

ԹԱՏ. 1300

ԳՐԱԴ. 515 Բ.

ՏԻՐԱԳ. 500

## ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՎԻ- ՏԱԼԻԶՄԻ ՃԱՄԱՆԱԿ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

### 1. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

#### ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ամեն մի կապիտալիստական ձեռնարկության մեջ, յուրաքան-  
չյուր գործարանում, զավողում, շախտայում և հանքում, կղտներ  
մի շարք տարբերութուններ, զոր կան բանվորների՝ գրության և  
աշխատանքի պայմանների միջև։ Բայց և ամեն տեղ, մենք կնկա-  
տենք հետեւյալ գծերը, վոր հատուկ են բոլոր կապիտալիստա-  
կան ձեռնարկություններին։

1. Չեռնարկության և նրա բոլոր գործիքների ու նյութեղենի  
սեփականատերը հանդիսանում է կապիտալիստը կամ կապիտա-  
լիստների մի խումբ։

2. Այդ բոլոր ձեռնարկություններում աշխատում են բանվոր-  
ներ, վորոնք կատարում են կապիտալիստների հանձնարարած աշ-  
խատանքները, նույն այդ կապիտալիստների նշանակած հակիչ-  
ների հսկողության տակ։

3. Ամբողջ արդյունքն ստեղծվում է բանվորների աշխատան-  
քով։ Սակայն բանվորներին վճարվում են նրա միայն մի փոքր  
մասը, վորաքս աշխատավարձ, վորով բանվորը հազիվ պահպա-  
նում է իր գոյությունը։ Մնացած ամբողջ արդյունքը մնում է կա-  
պիտալիստների խմբակին՝ գործարանների ու գավողների տերերին։

4. Իր ձեռնարկության մեջ կապիտալիստը լիակատար տեր է։  
Բանվորը պետք է հսկատակվի կապիտալիստի մշակած կանոններին։

սկսոք և անի այն , ինչ վոր հրամայում են նրան տերը կամ նրա համատարիմ ծառաները : Իսկ յեթե բանվորը սկսում է բազոքել գործարանային կարգերի գեմ , անմիջապես «փակում են» նրա հաշիվը : Կապիտալիստը զիտի , վոր հեռացված բանվորի փոխարին միշտ ել կդանվեն հաղարավոր ուրիշ ցանկացողներ , վորոնք անարտաւնչ կկատարեն զործարանային կանոնները :

Յեթե կապիտալիստին ձևոնտու յե կրծատել իր բանվորների թիվը , նա անմիջապես փողոց է չպրատում նրանց : Կապիտալիստին ընալի չի հետաքրքրում , թե իր զուրս չպրատած բանվորները ուրիշների մոտ գործ կդանի՞ն , թե պիտի մեռնեն սովից : Կապիտալիստի համար կարեւոր է միայն մի բան—գորքան հնարավոր և շատ սույն ստանալ : «Ավելի շատ վաստակ» ահա այն նշանաբաններ և հիմնական կանոնը , վորով զեկավարվում են պարոն կապիտալիստները :

Իսկ ինչո՞ւ բանվորները չեն կարաղանում լիովին ոպտապործել իրենց աշխատանքի արդյունքը : Ինչո՞ւ կապիտալիստները իշխում են բանվորների վրա :

Վորովհետեւ կապիտալիստական հասարակության մեջ չողը , զործարանները , զավադները , յերկաթուզինները , մի խոսքով արտապրության բոլոր միջոցները կապիտալիստների մասնավոր սեփականությունն են : Բանվորն «ազատ» և աշխատանքի միջոցներից , նա մերկ և ու աղքատ :

Բանվորներն ու կապիտալիստները յերկու տարրեր հասարակական դասակարգեր են , հենց նրա համար , վոր նրանք արտապրության մեջ իրար նկատմամբ և աշխատանքի միջոցների նկատմամբ տարրեր զրության մեջ են գտնվում : Բանվորությունը և բուրժուազիան կապիտալիստական հասարակության հիմնալիքն զասակարգերն են . բուրժուազիան , այսինքն կապիտալիստները , վորոնք տիրապետում են արտապրության միջոցներին , հակադիր շահեր ունեն որութեարիատի՝ այսինքն վարձու բանվորների նկատմամբ :

Կապիտալիստական հասարակության մեջ բանվոր զասակարգն ամբողջ հարստության սանեզծողն և հանդիսանում : Բայց այն հանգստաները , վոր նա զրկված և արտազրության միջոցներից , նրան միակատար կախման մեջ և զնում կապիտալիստներից , վորոնք տիրապետում են այդ արտապրության միջոցներին : Բանվորաւթյան ծաներ զրությունն ամբողջապես հետևանք և այդ կախյալ վիճակի :

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍՎԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Ամեն մարդ զոյտթյան միջոցների կարիք և զգում։ Գոյության անհրաժեշտ միջոցները վոչ վոքի ձրի չեն տրվում։ Կապիսատալիսական հասարակության մեջ զոյտթյան միջոցները միայն զնել կարելի յն։ Բայց զոյտթյան միջոցները գնելու համար հարկավոր և փոխարենը վորեն բան տալ, հարկավոր և վորեն բան վաճառել։ Յանվորը վոչինչ չունի վաճառելու, վորովհետեւ նա վոչ մի ապրանք չանի։ Մնում և մի հնարավորություն։ առաջարկել իր աշխատանքի ունակությունը, իր բանվորական ուժը։ Յեկի խկացես, բանվորը չուկա յն հանում իր արդ յուրահատուկ ապրանքը՝ բանվորական ուժը և վաճառում և կապիտալիստին։ Վերջինս վորոշ գին և վճարում բանվորին նրա արդ ապրանքի համար։ Բանվորական ուժի գինը աշխատավարձն է։

Այն փանար, վոր բանվորական ուժը ապրանք և համբխանում, կաղմում և կապիտալիստական հասարակության հիմնական բնորոշ գիծը։

Յերեսուն տարի սրանից առաջ մի թերթիկում լենինն այսպես և նկարագրում բանվորների դրությունը։

«Մենք չառ ենք աշխատում, մենք անշափի հարստություններ ենք ստեղծում, վոսկի և գործվածք, գիպակեցեն ութավիշ, յերկրի խորքերից յերկաթ ու ածուխ ենք հանում, կահուցում ենք մեքենաներ, կահագորում ենք նավեր ու պարաներ, անց ենք կացնում յերկաթուղներ։ Աշխարհի ամբողջ հարստությունը ստեղծված և մեր ձեռքերով, ձեռք և բերքած մեր քրտինքով և արյունով։ Իսկ ի՞նչ հատուցում ենք ստանում մեր արդ տաժանակիր աշխատանքի համար։ Արդարացնորեն մենք պետք և ապրենք լավ բնակարաններում, պիտի ունենանք լավ հագուստ և հոմենայն զեկոս առոյա հացի կարիքը չպիտի զգանքը։ Բայց մեզ բոլորիս լավ հայտնի յն, վոր մեր աշխատավարձն այնքան չնչին է, վոր մենք հազիր ենք կարողանում պահել մեր զոյտթյունը։ Մեր տերերն իջեցնում են աշխատանքի զնահատումը, սովորում են աշխատել արտաժամյա, անիբավացի կերպով տուգանում են, մի խոսքով մեզ ամեն կերպ ճնշում են, իսկ մեր կողմից դժոհություն լինելու դեպքում՝ առանց այլեւըլության մաքրում են մեր հաշիվը, հեռացնում աշխատանքից»<sup>2</sup>)։

Բանվորը աշխատավարձ և ստանում , ուրեմն և զոյտոթյունը պահպանելու հնարավորություն և ստանում այն դեպքում , յերբ նա իր տիրոջ համար ստեղծում և հարստություն՝ կապիտալ : Իսկ կապիտալը հենց այն ուժն է , վորը ճնշում և շահագործում և նըրան : Աւեմն՝ զուրս և գալիս , վոր բանվորն ինքնն է կոռում այն վոսկե շղթաները , վորով նա կապկապված և կապիտալին :

Բանվոր դասակարգը իր ստեղծած հարստության միայն մի փոքրիկ մասն և ստանում : Այդ հարստության մյուս խոչը ու հարածուն մասը լցվում է կապիտալիստների դասակարգի գրպանը : Հենց սրա մեջ և կայանում պրոլետարիատի շահագործման եյությունը , հենց սրա վրա յէ հենված կապիտալիստական հասարակության դոյությունը :

### ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԵՎ ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՅԻ ՇԱՀԵՐԻ ԱՆՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորն աշխատում և վորքան հնարավոր և ձեռնուու պայմաններով վաճառել իր բանվորական ուժը : Վորքան կարի լինեքան վորական որը և վորքան բարձր լինի աշխատավարձը , այնքան բավել և բանվորի համար : Կապիտալիստն ել ձգտում և վորքան հնարավոր և հեծան զնի բանվորական ուժը : Ինչքան յերկար լինի բանվորական որը և վորչափ ցած լինի աշխատավարձը , այնքան ձեռնուու յէ կապիտալիստին և այնքան վաս և բանվորի համար : Յեթև այդ ճիշտ և մի առանձին բանվորի նկատմամբ , առաջ ճիշտ և և ամբողջ բանվորական մասսային նկատմամբ :

Ամենքին ել պարզ է , վոր պրոլետարասը , վորքան մեծ բաժին ստանա իր աշխատանքով ստեղծած հարստությունից , այնքան քիչ կմնա բուրժուազիային և ընդհակառակը : Բանվոր դասակարգի և կապիտալիստ դասակարգի շահերը ուղղակի հակաղիք են իրար և վոչ մի դեպքում չի կարելի հաշտեցնել :

Կապիտալիզմի զարգացման պատճությունը ցույց է տալիս , վոր պրոլետարիատի և բուրժուազիայի զրության տարրերությունը քանի զնում , ավելի խորանում և , անդունքը մեծանում : Լենինը «Աղքատացումը կապիտալիստական հասարակության մեջ» հոգվածում գրում է գերմանական բանվորության մասին . (անկասկած ուսւա բանվորներից շատ ավելի լավ գրության մեջ եր զտնվում զերժանական պրոլետարիատը) . «բուրժուական սոցիալ-քաղաքաղեների ավյալ-

ներով, վորոնք հենցում են պաշտոնական ազգյուրների վրա, Գեղմանիայում վերջին 30 տարվա ընթացքում<sup>\*)</sup>) բանվորների աշխատավարձն աճել է միջին հաշվով 25 տոկոսով: Նույն այդ ժամանակամիջոցում կենսամթերքների արժեքը բարձրացել է առնվազն 40 տոկոսով:

Ցեփ ուտելեղեն և՝ հագուստեղենը ու վառելիքը, բը-նակարանի վարձը, թանգացել են: Բանվորը բացարձակութեն ազգատանում և, այսինքն՝ առաջվանից ավելի աղքատ և դառնում, ստիպված է ավելի վատ ապրել, ավելի վատ սնվել, քաղցած մնալ, տառապել ներքնատներում և տանիք-ների տակ . . .

Հարստությունը կապիտալիստական հասարակության մեջ աճում է անյերեկավայրելի չափերով, իսկ բանվոր դաստիարակը աղքատացում է զնում:

Սա միայն մի որինակ է, վոր ազգացուցում և Մարքսի հաստատած որենքը: Մարքսն ասում էր, վոր «Ժամանակակից արդյունաբերության զարգացումը կշենքի թաթը պիտի իջեցնի հոգուտ կապիտալիստների և ի վեաս բանվորների»:

Կապիտալիստական զարգացումն այն ուղղությամբ չի ընթանում, վոր բարձրացնի միջին աշխատավարձը, այլ բնիթանում և այն ուղղությամբ, վոր իջեցնի այդ աշխատավաճրը, նվազեցնի մինչև քաղցածության չափերը: Կապիտալիզմի զարգացումով բանվոր դասակարգի շահագործումը չի թուլանում, այլ ուժեղանում է, իսկ դրա հետ միասին խորանում են հակասությունները և սրբում և պրոլետարիատի ու բուրժուազիայի պայքարը:

Կապիտալիստական հասարակության մեջ պետական իշխանությունը կարող է արդյոք անտարբեր մնալ դեպի այս պայքարը: Իսկ յեթե պետական իշխանությունը չի կարող անտարբեր մնալ դեպի այս պայքարը, ապա ում կողմը պիտի պահի նա:

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՅԻ ԴԱՍԱԿՐԴԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԵՆՔ

Առաջին հայացքից այնպես է թվում, թե պետական ազգարար հավասար չափով ծառայում է կապիտալիստական հասարակության բոլոր դասակարգերի շահերին: Սակայն, հենց վոր պրոլետարիատի շահերը անմիջական բաղիսման մեջ են մտնում բուրժուազիայի շահերի հետ, անմիջապես սկսվում են բուրժուական

<sup>\*)</sup> Գրված է 1912 թվին

պետաթյան դասակարգացին բնություն : Բուրժուական պետաթյունը միշտ էլ պաշտպան և բուրժուազիային, հակառակ պոլիտարիտատին :

Հիշում եք, թե ինչպես ցարական կառավարությունը 1912 թվին Լենայում հարյուրամյուր բանվորներ գնդակահարեց, յերբ բանվորները համարձակվել ելին միմիայն պաշտպանվել վոսկի արգյունաբերողների անխիզ շահագործություն :

Զեղնից շատերը կհիշեն 1905 թվի հունվարի 9-ի արյունոտ կերպակին, յերբ Պիտերի բանվորները խաղաղությամբ գնացին թաղամարփ մաս խնդրելու, վոր ազատի իրենց կապիտալիստների հնչաւմներից : Թագամարը հրաժարվեց նույնիսկ լսել նրանց : Ի պատճառան բանվորների գանգատներին և խողիքքներին, նա հրամայեց գնդակահարել բանվորներին : Հետեանքը յեղակ հարյուրամյուր սպանվածները ու վիրավորներ :

Այդպիսի «զենոքեր» շատ ավելի կարելի յերեկ արտօնահամայնյան բանվորների կյանքից : Այս ամենը ցույց են տալիս, վոր ազագաւակարգային պետություն աշխարհում վոչ մի տեղ և յերբեք չի յեղել ու չի ել կարող լինել : Կապիտալիզմի որով պետական իշխանությունը միշտ էլ կանգնած և յեղել ունեսը դասակարգի կողմը :

«Փամանակից պետական իշխանությունը վոչ այլ ինչ և, յերեւ վոչ մի կոմիտե, բուրժուազիայի հասարակական զործերի վարիչ»—այսպես և զրել Մարքսը «Կոմունիստական Մանիֆեստում» :

Լենինը հազար անգամ կրկնել ե, վոր «մաքուր» զեմոկրասիայի մասին յեղած խոսքերը կեզծ են, վոր գերգասակարգային դեմոկրատիա չի լինում : «Հին պետությունը, —զրում ե նույնությունը բուրժուական հանրապետություններից ամենալավն ու ամենապետականը, յերբեք չի յեղել և չեր ել կարող այլ բան լինել, քան բուրժուազիայի դիկտատորան, այսինքն նրանց զիկտատորան, վորոց ձեռքումն և գանվում—արտադրության միջոցները, հողը, յերկաթուղիները, մի խոսքով բոլոր նյութական միջոցները, աշխատանքի բոլոր զործիքները» :

Պետական ձեւերը զանազան են : Բայց լինի դա ինքնակալ միապետությունը, ինչպես Ռուսաստանումն եր մինչև 1905 թվի հեղափոխությունը, սահմանադրական-միապետություն, ինչպես այժմ անզիւայումն է կամ հանրապետություն—(Հ. Ամերիկայի

Միացյալ Նահանգներումն է, Գերժանիայում, Ցրանսիայում և  
այլն մինչեւ յն եւ, քանի զեւ արտապրության միջոցները մնում են  
բռնքուազիայի սեփականություն, պետական իշխանությունը միշտ  
ել հանդիսանում է նրա զասակարգային տիրապետության գենքը:

## ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՈՐՈՇ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋ

Իր գոյության հենց առաջին որից բանվոր զասակարգը պայ-  
քար և մզում բուրժուազիայի գեմ: Բանվորությանը այդ կովկա-  
ղորդում և ամենից առաջ նրա աշխատավարձն անկումից ապահովե-  
լու ձգտումը: Այդ պայքարում պրոլետարիատը ողնականներ չու-  
նի, նա վոչ վոր չունի, վորի վրա կարելի լիներ հենվել, նա պաշտ-  
ոպաններ չունի: Յեվ Մարքսը և Էնգենին ասել են, վոր իր գրությու-  
նը բարելավելու համար մզվող պայքարում պրոլետարիատը կարող  
և հույս զնել միայն ինքն իր վրա, միայն իր զասակարգի ուժերի  
վրա: Բանվորներն իրենք ել շատ չուտով փորձով համոզվեցին այս  
հասարակ ձևարտության մեջ:

Ակզրում բանվորները պայքարում ելին իրենց աերերի գեմ  
ցրված ույժերով, զատ-զատ: Այս պայքարի մեջ հաղթողը կատի-  
տալիսան եր լինում, վորովհետեւ նա անհամեմատ ուժեղ եր չկազ-  
մակերպված բանվորից: Աստիճանաբար բանվորներն սկսում են  
հասկանալ, վոր իրենց պայքարը հաջող կլինի միայն այն գեպքում,  
յիրը իրենք վուրքի կանգնեն համերայխությունը, — գործին՝ «բո-  
րուրը մեկի համար և մեկը բոլորի»: Առանձին զործարանի բանվոր-  
ները կոլլեկտիվորնեն գուրս են գալիս այդ զործարանի տիրոջ դեմ,  
իսկ հետո մի ամբողջ շրջանի բանվորությունը զուրս և զարիս որվ-  
յալ ըրջանի բոլոր կապիտալիստների գեմ:

Այն ուժը, վոր ունի կապիտալիստը, արտապրության միջոցնե-  
րի աերը, գրդում է բանվորներին համախմբվել. նրանք սկսում են  
սուեղծել ու ամբապնդել իրենց զասակարգային կազմակերպու-  
թյունները և վորքան կապիտալիստներն ավելի յեն համախմբվում  
բանվորներին ճնշելու համար, այնքան ավելի յե աճում բանվորնե-  
րի ձգտումը՝ ամբապնդել իրենց զասակարգային կազմակերպու-  
թյունները: Յեվ այսպիսով, բանվորության տնտեսական շահերի  
պաշտպանության հողի վրա սկիզբ են սոնում արիեստակցական

միաւրյունները : Ենթան ասում ե , թե «կապիտալիզմի զարգացման և կղրի չքանում արհմիությունները բանվոր դասակարգի համար հոկայական հառաջաղիմությունների հյին , վորպես մի անցում բանվորների ցրվածությունից ու անսպնականությունից , զեպի զասակարգային միավորման սկզբնավորուրյուններ» :

Պրոլետարիատի դասակարգային հիմնական կազմակերպությունները , վոր անխուսափելիորեն սկիզբ են առնում նրա զարդացման վրոշ աստիճանի վրա , հանդիսանում են քաղաքական կուսակցություններ և արհեստակացական միությունները :

Կոմունիստական կուսակցություններ պրոլետարիատի դասակարգային կազմակերպության ամենաբարձր ձևն է : Կոմիուսի մեջ է մտնում բանվոր դասակարգի ամենալավ , ամենաառաջավոր , ամենապիտակից մասը : Կոմունիստական կուսակցության գլխավոր իննդիրն եղեկագարել պրոլետարիատի քաղաքական դասակարգային պայքարը : Կուսակցություններ ղեկացարում ե բանվոր դասակարգի մյուս բոլոր կազմակերպություններին :

Արհեստակացական միություններն անխուսափելիորեն սկիզբ են առնում վորպես պրոլետարիատի անտեսական չահերի համար մղվող պայքարի հետեանք :

Բոլորը գիտեն , թե կապիտալիզմի պայմաններում ինչ են առնում արհեստակացական միությունները : Նրանք պայքար են մղում բարձրացնելու համար գոյություն ունեցող աշխատավարձը և ամբողջ ուժով ընդդիմունում են աշխատավարձի իջեցմանը : Արհմիությունները պայքարում են բանվորական որր կարևորագնելու համար : Արհմիությունները պաշտպանում են բանվորին , պահանջնելով նրա համար աշխատանքի համապատասխան պայմաններ : Նրանք գեմ են դուրս գալիս առողջանքներին , վոր զցում ե կապիտալիստը բանվորի վրա , զանազան «արարքների» համար : Արհեստակացական միությունները պայքար են մղում այն բոլոր ձեչումների գեմ , վոր գործադրում են կապիտալիստաները բանվորների նկատմամբ : Արհեստակացական միությունները պայքարում են այն բոլորի ամենամատ և առորյա չահերի համար , ովքեր վաճառում են իրենց բանվորական ուժը :

Արհեստակացական միությունների նպատակներն ու խնդիրները պարզ են ամեն մի բանվորի համար : Յուրաքանչյուր բանվոր ու ծառայող կարող ե մտնել արհեստակացական միության մեջ : Դրա համար չի պահանջվում ընդունել այս կամ այն կուսակցության ծրա-

զիրը : Դրա համար անհրաժեշտ է միայն, վոր միության մեջ մտնողը ընդունի միութենական կանոնադրությունը, յենթարկվի միութենական դիսցիպլինային, սուանց վորի կազմակերպված պայքար չի կարող լինել :

Դրա համար ել արհեստակցական միությունները գտնում են վարձու աշխատավորների լայն, մասսայական կազմակերպություններ :

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑՄԻՒԹՅՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ

Ինքնին հասկանալի յի, վոր կազմակերպություններն ել իրենց «մի-քոցներն» են ձեռք առնում արհեստակցական միությունների դեմ : Ամենից առաջ նրանք ձգտում են ձեղքել բանվորության գասակարգային շարժումը : Այդ նպատակով նրանք կաշուում են բանվոր դասակարգի ավելի վրաբեկալ մասին, նրա վերնախառվին : Դրանով նրանք աշխատում են այլազանություն մտցնել բանվորների միջև և խախտել արհմիութենական օգայքարի միասնականությունը :

Սակայն բուրժուազիան արհեստակցական միությունների դեմ պայքարելու ավելի ուժեղ միջոցներ ունի իր ձեռքին : Բուրժուազիան աշխատում է թուլացնել միությունների ազգեցությունը նրանք, վոր յերեմն հրաժարվում է բանակցել նրանց հետ—վորպես բանվորների ներկայացուցիչների : Բուրժուազիան համախմբվում է ձեռնարկատիրական միությունների մեջ, և վորոշում են—աշխատանքի ըլնդուննել և հեռացնել իրենց ձեռնարկություններից միությունների անդամներին : Միաւթյան կազմակերպած գործադրույի դեմ բուրժուազիան հաճախ հարձակման և դիմում և հայտարարում է լոկատում, (վորոշ ժամանակով փակում են իրենց ձեռնարկությունները, և բոլոր բանվորներին արձակում) :

Իսկ յերբ արհեստակցական միությունները դուքս են գալիս միասնական ձականով, այն ժամանակ բուրժուազիան նրանց դեմ և դուրս բերում իր բոլոր միջոցները՝ մամուլը, իր միություններն ու իրաւակցությունները, և վերջապես, ամենահզոր կազմակերպությունը—իր պետությունը : Բուրժուազիան պետությունը որենքի միջոցով սահմանափակում է միությունների գործունեցությունը, չարգ ու փշուր և անում միությունները, իսկ ակախիլ աշխատակիցներին ու արհեստակցական շարժման առաջնորդներին բանտերն է նետում, աքսոր և ուզարկում :

## ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿՐԴԱՅՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այսպիսով, քանի դնում, արհեստակցական միությունները դուրս են գալիս բուրժուազիայի և նրա սկեռության դեմ և ազատության են պահանջում իրենց գործունեյության համար։ Տնտեսական պայքարը վտխում է քաղաքական պայքարի, վորի մեջ դասակարգերի պայքարը վեր և ածվում բուրժուազիայի տիրապետությունը տառապելու պայքարի։

Արինակ, միություններն առաջադրում են զուտ տնտեսական պահանջ—ութեամյա բանվորական որ։ Բոլոր կապիտալիստներն ընդիմանում են այդ պահանջին, բոլոր բանվորները պաշտպանում են այդ։ Դեմ առ զեմ կանգնած են յերկու թշնամի դասակարգեր։ Շախարվում է դասակարգային պայքարը։ Իսկ ամեն մի դասակարգային պայքարը քաղաքական պայքար և—սովորեցրել և մեղմաքար։

Տնտեսական պայքարը անխուսափելիորեն քաղաքականի վերածվելու ամենացայտուն տեսակը հանդիսանում է անցրած տարվա անգլիական ինոնազործների և Անգլիայի պրոյետարիատի բնդհանուր զործագույր։ Այդ անտեսական զործագույր, հակառակ նրա սեփարմիստ դեկադարձերի խնամքի, հոկայական քաղաքական զենքերի վերածվեց։

Այս բոլոր որինակները ցույց են տալիս, վոր կյանքում, զոր կյանքում, զործնականի մեջ քաղաքականությունն ու եկոնոմիկան իրարից անկախ բաներ չեն։ Բնդհակառակը, զրանք յերկուսն ել սերտորեն կառված, հյուսված են իրար հետ և վորոշակի սահման զնել նրանց միջին—հնարավոր չե։ Դրա համար ել բանվոր դասակարգի տնտեսական պայքարը չի կարող անջատված լինել նրա քաղաքական պայքարից։ Պրոյետարիատի անտեսական նվաճումները միայն այն ժամանակ կայուն կլինեն, յեթե նա կարողանա ամրապնդել այն՝ քաղաքական նվաճումներով։ Դրա համար ել կապիտալիստական հասարակության մեջ արհեստակցական միությունների գերը լոկ տնտեսական պայքարով չի սպառվում։ Կոմունիստական կուսակցության զեկավարությամբ նրանք նաև քաղաքական պայքար են մղում։

Այսպիսով, իր անտեսական կարբքների համար պայքար մղելու ընթացքում պրոլետարիատն այն դիտակցությանն է գալիս, վոր անհրաժեշտ և նաև քաղաքական պայքար մղել։ Արհեստակցական միությունները այն լայն մասսայական կազմակերպություններն

Են, վորոնց մեջ, կոմունիտատական կուսակցության ղեկավարությամբ, կոմիտում և որոշետարխութիւնակարգային բնընտեղիությությունը:

Ահա թե ինչու կապիտալիստական հաստրակության մեջ արհեստական չարժման վերջնական նպատակն է հանդիսանում ամենազորեղ բուրժուական կազմակերպության, նրա պետության լուծումը ուրեմն և կապիտալիստական կարգերի վաչնչացումը:

Ինինը մասնանշում եր, վոր «աշխարհում և վոչ մի տեղ պրոբառարխութիւնակարգացումը չի ընթացել և չի ընթանա այլ կերպ, քան արհմիությունների միջոցով, նրանց և բանվոր զասակարգի կուսակցության փոխադարձ գործակցության միջոցով»: Արհեստականական չարժմանը մասնակցում են հարյուր հազարավոր ու միլիոնավոր պրոլետարներ, կուսակցությունը հեղափոխական ուղղություն և տալիս արհեստական չարժմանը<sup>\*</sup>):

## ՄԻՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՎՈՐՈՄԵՍ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԴՊՐՈՑՆԵՐ

«Բանվորները չպիտի մոռանան, — ասել ե Մարքսը, — վոր իրենց գրությունը բարելավելու համար մզգակ պայքարում, նրանք ողայքարում են հետեանքների զեմ և վոչ թե այդ հետեանքների պատճառների զեմ, վոր նրանք միայն զանգազեցնում են հոսանքի շարժումը և վոչ թե փոխում են նրա իսկական ուղղությունը... նրանց գրությունն արժատապես փոխելու համար նրանք իրենց գրոշէ վրա հետեյալ հեղափոխական նշանարանը պիտի զրեն. «Վարձու աշխատանքի վերացում»: Պրոլետարիատն իր հարվածներն ուղղելու յի կապիտալիստական կարգերի իսկական հիմքերի կործանմանը»:

Տապալել բուրժուական պետությունը, խլել արտապրության միջոցները կապիտալիստների խմբակի ձևոքից, գարձնել այն հասարակական սեփականություն—այս և պրոլետարիատի անելիքն ու պատճական կոչումը:

Ինչպես անխուսափելիորեն սկիզբ և առնում բանվոր զասակարգի տնտեսական պայքարը, այնպես ել անխուսափելիորեն զարգանում և նրա պայքարը բուրժուազիայի զեմ, կոնյվ, պրոլետարիատի զիկատառությի միջոցով սոցիալիզմին հասնելու համար: Դա

\* ) կուսակցության և միությունների փոխհարաբերությունների մասին ավելի մտնըամառն խոսվում է XIX դիմում:

անխուսափելիորեն բղխում և պրոլետարիատի գրությունից , վորպես ձեզված ու շահազործվող դասակարգիք : Արհեստակցական միությունները կուսակցության դեկավարությամբ հակայական դեր են խաղում այդ պայքարի մեջ : Արհմիությունները պրոլետարիատի լայն մասսաների համար , սոցիալիզմի համար մղվող պայքարի դպրոց են հանդիսանում :

Տեսնենք , թե ինչպես ե զարգացել դասակարգային պայքարը Ռուսաստանում և ինչ դեր են խաղացել նրա մեջ կուսակցությունն ու միությունները :

## 2. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

### ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Կապիտալիստական արդյունաբերության սաղմերը , —առաջին գործարաններն ու զավողները —մեկ մոտ սկսել են սկիզբ առնել դեռ շատ վաղուց : Սակայն ճորտատիրական կարգն այն արգելակն եր , վորը զանգաղեցնում եր արդյունաբերական կապիտալիզմի զարգացումն Ռուսաստանում : Յեզ 1861 թվին միայն , ճորտատիրական կարգերի անկումից հետո , Ռուսաստանը կապիտալիստական զարգացման լայն ուղին և մտնում :

Այդ ժամանակից սկսած՝ կապիտալիստական արդյունաբերությունն անբնդհատ աճում է , սկզբում զանգաղ , հետո ավելի արագ ու արագ : 90-ական թվականներին ուսւական կապիտալիստական արդյունաբերությունը իր ծավալումով ու կայունությամբ չտեսնված չափերի յի հասնում :

«Կապիտալիզմի զարգացման հարցում դժվար թե ամենակարեվոր նշանակությունը չունենա վարձու աշխատանքի տարածման աստիճանը : Կապիտալիզմը —դա ասկրանքային արտադրության զարգացման այն փուլն է , յերբ բանվորական ուժը ևս ասկրանք է զառնում : Կապիտալիզմի հիմնական ձգուումն այն է , զոր ժողովրդական տնտեսության բոլոր բանվորական ուժերը արտադրության մեջ զործադրվեն միմիայն ձեռնաբերկատերերի կողմից առ ու ծախսի յենթարկվելուց հետո» (Լենին) :

Վարձու աշխատանքի տարածման աստիճանի ընդհանրացում կատարելով , Լենինը գտնում էր , վոր 90 ական թվերի սկզբին Ռուսաստանում վարձու բանվորներ կային մոտ տասը միլիոն հոգի

(Հաշված նաև զյուղատնտեսական բանվորներին, մանր կապիտալիստական արդյունաբերության բանվորներին, ուստի բանվորներին և այլն) :

Թէ ինչպես եր աճում կապիտալիստական արդյունաբերությունը, յերեսում և հետեւայ թվերից . 1866 թվին 16-ից ավելի բանվորներ ունեցող արդյունաբերական հիմնարկներ Յեվրոպական միունիստանում հաշվում եյին մոտ  $2\frac{1}{2}$ —3 հազար, իսկ 1903 թվին՝ տրգեն մոտ 9 հազար : Յերեսուն տարուց քիչ պակաս ժամանակամիջոցում զործարանների թիվը ավելացել եր առնվազն յերեք անգամ :

Բարենորոգումից անմիջապես առաջ խոչոր արդյունաբերության մեջ զրադշած բանվորների թիվը հասնում էր մոտ կես միլիոն մարդու : Այսուհետեւ տեսնում ենք անընդհատ աճում : Ամբողջ կայսրության մեջ կապիտալիստական խոչոր արդյունաբերության մեջ զրադշած բան—1890 թ. 1.432 հազ. իսկ 1900-03 թվ. արդեն 2,792 հազ. \*) : Բարենորոգումից (ռեֆորմա) ընդամենը 30 տարի հետո արտադրական բանվորների թիվը ավելացել եր  $5\frac{1}{2}$  անգամ : Նույն արդ ժամանակամիջոցում, չնորհիվ մեքենայական ուժի ավելի ու ավելի զործադրումն, արդյունաբերության արտադրանքը չափ ավելի մեծ չափով եր ավելացել :

## ԲԱՆԿՈՐ ԴԱՎԱԿԱՐԳԻ ՄԱԴՐԵ



\*) Բոլոր թվերը վերցրած են Լենինի 111 հատուրից «Կապիտալիզմի զարգության մուսասանում».

Կապիտալիզմի դարպացման հետ միասին աճում ու դարձանում է նույն պրոյեկտարիատը և նրա գառակարգային հեղափոխական պայքարը :

Առաջին խոչոր գործադուլը, վոր բանվորական ինքնուրույն շարժման սկիզբ հանդեսացավ, բոնկվեց Նեվայի մանածագործարնում, 1870 թվին : Այդ ժամանակից արդեն սկսվում է ուսու բանվորների գործադուլային պայքարը կապիտալի գեմ :

Ակզրում այդ գործադուլները գլխավորապես պաշտպանողական բնույթ Ելին կրում, նրանք ծագում ելին առարերայնորեն, վորպես բողոք, ուղղված դաժան շահագործման դեմ և մեծ մասամբ անցնում ելին առանց վորեն զեկավարության : Բայց 70 ական թվերի վերջերին բանվորների գործադուլներն ավելի կազմակերպված են դառնում : Իր ուժով, տոկունությամբ և զիտակցականությամբ առանձնագետ աչքի բնկայի Սավվա Մարագովի մանուֆակտուրայում լոնկած նշանակոր գործադուլը, 1885 թվին, վոր անցավ Վորկով ու Միտոնկոս բանվորների զեկավարության տուել :

Բանվորների կազմակերպված պայքարի գարկացման մեջ խոչընուն նշանակություն ունեցավ 90 ական թվերի կեսերին Լենինի սուեցած «Բանվոր դաստկարգի ազատության համար պայքարող միությունը» : Այդ ժամանակ ուսումնական բանական առարկան առարերային շարժումների պարբաններում այդ խմբակները չելին կարող շատ-թե քիչ լայն կազմակերպություններ դառնալ : Եռոյնիսկ իրենց՝ ամենախիստ զազանի գործունեյությունը ել նրանք չելին կարողանում ազահովել իրենց պահնորդական բաժնի (օքրանկարի) հարձակումներից : Առկայն պահնորդական բաժնիը քայլայում եր մի խմբակը, նրա տեղ սկիզբ ելին առնում մի շարք ուրիշները : Յեվ քանի զնում, այդ անհեղալ խմբակները ավելի հեղափոխական սոցիալ-գեմուկրատական դունավորում ելին ստանում :

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Դեռ 70 ական թվերի կեսերից բանվորների մեջ սկսում են սկիզբ առնել անհեղալ հեղափոխական խմբակներ : Ակզրում գետես նրանք միովին ձեւ ակերպված կազմակերպություններ չելին : Հասկանալի յեւ, վոր վոստիկանական ճնշումների պարբաններում այդ խմբակները չելին կարող շատ-թե քիչ լայն կազմակերպություններ դառնալ : Եռոյնիսկ իրենց՝ ամենախիստ զազանի գործունեյությունը ել նրանք չելին կարողանում ազահովել իրենց պահնորդական բաժնի (օքրանկարի) հարձակումներից : Առկայն պահնորդական բաժնիը քայլայում եր մի խմբակը, նրա տեղ սկիզբ ելին առնում մի շարք ուրիշները : Յեվ քանի զնում, այդ անհեղալ խմբակները ավելի հեղափոխական սոցիալ-գեմուկրատական դունավորում ելին ստանում :

Այդ խմբակների ծագումը ցույց էր տալիս, վոր բանվոր զառակարգի հրամայական պահանջն է իր սեփական կազմակերպություններն ունենալ: 90 ական թվականների վերջերին բարոր խոչըսք բանվարական կենտրոններում զոյտթյուն ունեցին արդպիսի սոցիալ-պետականական խմբակներ: 1898 թվին գումարվում է Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության սուսանջին համագումարը: Խակ 1903 թվին՝ յերկրորդ համագումարին վերջնականացես կազմվում է կազմակերպչորեն ձևվակերպվում և Ռ. Շ.-Դ. Բ. կ.:

Մեր կուսակցությունը հեղափոխական բանվորական շարժման դավակին է: Նա խկույն իր ձեռքն և սուսում բանվոր գասակարգի ամբողջ պայքարի ղեկավարությունը: Նրա ղեկավարությամբ սուսուրութեարքար կազմակերպված անահուական պայքարի բովից անցնում է քաղաքական պայքարի:

Բանվորական հեղափոխական շարժման և գասակարգային պայքարի հիմունքի վրա, հետապայում զարգանում են արհեստական միությունները: 90 ական թվականներից ծագում են բանվորների արհեստական կազմակերպությունների սուսանջին սկզբնավորությունները (անլեզալ գործադուրային դրամարկղները, արհեստական միությունները, փոխառության լեզու բնկերությունները): Վաստիկանական ճնշումը յերկար ժամանակ թույլ չի տալիս, վոր կազմակերպությունների այդ ձեվերը զարգանան և մասսայական շարժում գտննան և 1905 թվի հեղափոխական պայքաններում միայն արհեստական միություններն աճում ու լայն մասսայական կազմակերպություններ են դառնում: 1905 թվի աշնանը միությունների զարգացումը լայն շափեր և բնդունում է նույն տարվա վերջին արդեն նրանք ընդգրկում ելին մոտ 100 հազար բանվորներ: Միություններն ստեղծելու գործին անմիջական մասնակցություն և ունեցել մեր կուսակցությունը: Արհմիությունները զարգանում ելին կուսակցությամբ: Յանդիսանլությունը դասակարգի մասսայական կազմակերպություններ, միությունները, կուսակցության ղեկավարությամբ, իրենց գործունեյության ամեն մի քայլը կապում ելին պրոլետարիատի համակարգային բնողիրների հետ:

**ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

1905—1907 թվերի հեղափոխական յեռամյակը առանձնապես աչքի յե ընկնում գործադուլային պայքարի գարզացմամբ։ Այդ ժամանակ Ռուսաստանում գործադուլային շարժումն այնպիսի չափերի յե հասնում, վորպիսին մինչև այդ ժամանակ յերբեք չեր յեղել առաջավոր կապիտալիստական յերկրներում։ Այսպիսի 1895—1904 թվերի տասնամյակի ընթացքում գործադուլներին մասնակցել են 43,000 մարդ, իսկ 1905 թվին միայն 2,863,000 գործադուլավորներ են յեղել։ Այնուհետև գործադուլային ուժքն սկսում է իջնել։ 1906 թիվը տալիս է 1,108 հազար գործադուլավոր, 1907 թիվը՝ 740 հազար, 1908 թվին արդեւ 176 հազար գործադուլավոր։

**ԳՈՐԾՎՈՒԹՅԱՅՑԻՆ**

ՊԱՅՔԱՐՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

1896—1916 թ.



**ԳՈՐԾԱԴՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ  
ՀԱՇՎԱԾ ՆԱԿ ՔԱԶԱՔՍՏԱՆԻ գործադուլին մասնակցողները 1905—07 թ. 3.033.417 կամ 64,8%**

գործին մասնակցողները	1905—07 թ.	3.033.417	կամ	64,8%
»	»	1905 թ.	1.842.662	» 64,4 »
»	»	1908—10 թ.	104.234	» 36,3 »
»	»	1911—13 »	1.060.635	» 61,8 »
»	»	1914—16 »	1.525.352	» 54,9 »

Յեթե առաջներում գործադուլավորների խոշորագույն մասը լինում էին վատ վարձատրվող տեքստիլ արդյունաբերության բանվորները, ապա 1905 թվին, ամենից ակտիվ դուրս են դալիս մետաղագործները։ «Մետաղագործների և ջուլհակների հարաբերությունը բնորոշ է, վորպիս առաջավոր չերտի փոխհարաբերությունը գեղի մասսան» (Լենին)։ Պայքարի առաջարկն է դուրս դալիս բանվոր դասակարգի առաջավոր և ամելի ուժեղ ջոկատը։

Սերբ կազ տնտեսական և քաղաքական պայքարի միջեւ—ուղարկած շրջանի գործադրութային շարժման ընորոշ գիծը :

Ալսակես, մասնակցում ելին (հազարներով)

1905 թ. 1906 թ. 1907 թ.

Տնտեսական գործադրութերին 1.439 456 200

Քաղաքական » 1.424 650 540

«Շարժման անկման ըրչանում (1906—1907 թ.թ.) տնտեսական գործադրութերի թիվն արագորեն ինում և, քան քաղաքական գործադրութերինը, դա, հիշեցնում ե մեզ ծանոթ յերեվութիւնը—առաջավոր տարրերն մեծ յեռանդով աշխատում են կոնդնեցնել հահանջը և հարձակում դարձնել այն» (Լենին) :

Կազմակերպի և միավետության գեմ բանվոր դասակարգի կողմից մզգող ամենասուր պայքարի պայմաններում ծնունդ և առնում ու զարգանում արհեստակցական միությունների ամենայեռաւ դործունեցությունը: Հասկանալի յե, վոր նման պայմաններում նրանք չենին կարող զրադշել ծրագրային կազմակերպչական շինուարությամբ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ և նկատել, վոր արդեն հինգ թիվի աշնանը վորոշ միությունների կենտրոնացումն և տեղի ունենում: Նույն այդ ժամանակ ստեղծվում են տեղական միջմիութենական միավորումներ—արհմիությունների կենտրոնական բյուրոներ: Այդ միջմիութենական մարմինները զեկավար դեր չենին խաղում, բայց նրանց կազմակերպումը ցույց է տալիս, վոր միությունների համբարական կառուցվածքի մեջ բեկումն եր սկավել: Առանձին միությունների կառուցվածքն ու պայքարը կազմում ե բանվոր դասակարգի ընդհանուր պայքարի ու խնդիրների հետ:

Իրենց սկզբնավորման հենց առաջին որերից միությունները ձգուում են ստեղծել արհշարժման համառուսական մի կենտրոն: Արհեստակցական միությունների առաջին կոնֆերենցիան (1905 թ. 24 սեպտ. —7 հոկտ.) վորոշեց համագումար հրավիրել և իր վերցրեց նրա նախապատրաստությունը:

Սակայն չհաջողվեց համագումար հրավիրել: Նույնը չհաջողվեց անել և յերկրորդ կոնֆերենցիային (1906 թ. փետրվարին), վորը համագումար հրավիրելու համար կազմակերպչական հահանջողութեր ընտրել:

Արդ կոնֆերենցիայի գլխավոր հոգրցն եր՝ վերաբերմունքը զեղսի 1906 թվի մարտի 4-ի որենքը։ Այդ որենքի նախապիծն արդեն հայտնի յեր։ Որենքը նպաստել ուներ սահմանափակել միությունների գործունեյությունը և արհարժումը դնել տերերի հոկտության տակ։ Իսկ զա նշանակում էր միություններից արմատախիլ անել նրանց հեղափոխական վողին և զրկել դասակարգային պայքար մղելու հնարավորությունից։

Բայց եղիկները միություններին առաջարկում եյին բանի տեղ չդնել այդ որենքը և առաջիւ պես շարունակել իրենց հեղափոխական գործունեյությունը։ Իսկ մենչեղիկները, դանում եյին, վոր միությունները պիտի լինալ զայտիթյուն ունենան, ուստի առաջարկում եյին որինական ձեզով հաշվառման յենթորեկիլ։ Կոնֆերենցիան բայց իկների տեսակետի վրա կանգնեց և վճռականացես զեմ արտահայտվեց այդ որենքին։ Միությունները հասկացել եյին մարտի 4-ի որենքի դասակարգային բնույթը և ցարական կառավարության թակարգի մեջ չընկան։ Կոնֆերենցիան վորոշեց, վոր հետագայում միությունները պիտի բացաշկարա զոյտիթյուն ունենան և վրա միանդամայն անհնարինության դեպքում պիտի սպառագործեն որենքը իրենց ոգտին։

«Փոթորկի և ճնշումների» ըրջանում ծնունդ առած միությունները, վոր զեկավարվում եյին մեր կուսակցության կողմից, ամրողապես կանգնեցին դասակարգային հեղափոխական ճանապարհի վրա։ Այսուհետեւ ինչքան ամրապնդվում են, այնքան նրանք վործագույշին շարժման դլուխ են կանգնում։ Կարելի յե տեսէ, վոր 1906 թվին նրանք վերջականապես տիրապեսում եյին զործադուլային շարժումներին։ Կուսակցության զեկավարությամբ արհեստակցական միությունները կազմակերպված պրոլետարական բանակը վոչ միայն զեսպի անտեսական պահանջների համար մզգող կոխին են տանում, այլև զեսպի ուղղակի հարձակում են տանում միապետական-կապիտալիստական կարգերի զեմ։ Իրենց անտեսական ու քաղաքական ազիտացիայով միությունները զարգացնում են բանվորական մասաններին քաջում են մարտական դասակարգային կազմակերպությունների մեջ, վորտեղ զարգանում և պրոլետարիատի կազմակերպչական վորձը, կարգապահությունը և ինքնազործունեյությունը։

Այս ամենը հիմք և տալիս առելու , վոր առաջին հեղափոխության շրջանում արհեստակացական միությունները բանվորական լայն մասսաների համար ծառայում եյին վարպես սոցիալիզմի համար մզգող պայքարի ամենահրաշալի դպրոցներ :

## ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հեղափոխության պարտությունից հետո բանվոր գասակարգի համար սե որեր սկսվեցին : Երա հեղափոխական կազմակերպություններն ավելիված եյին : Բանում ու աքուրը հարյուրավոր ու հաղարախոր լավագույն մարտիկներ եյին խումբ նրա չարքերից : Համարյա բոլոր արհմիությունները փակվել եյին : Իսկ մի կերպ զոյություն քարչ տվող միությունները սեղմում եյին իրենց աշխատանքների շրջանակները , հոգ տանելով միայն այն մասին , վարպետազի պահեն իրենց կազմակերպությունը : Կուսակցությունը ընդհատակյա աշխատանք եր տանում :

Վոստիկանական Ծի և արդյունաբերական կրիզիսի ազգեցության տակ (1907—1911) , վորը ծանր կերպով ընկել եր բանվոր գասակարգի մեջքին , բանվորական չարժումն անկաման շրջան և ապրում :

Բուրժուազիան , անցնելով հաղթանակող ցարիզմի կողմը , նրա հովանավորությամբ հարձակում և սկսում բանվոր գասակարգի վրա : Մասսայական դործազրկության պայմաններում , զուրկ իրենց կազմակերպություններից ու զեկավարներից՝ բանվոր գասակարգը մեկը մյուսի հետեւից կորցնում և իր այն զիրքերը , վոր զրայիլ եր բուրժուազիայից հեղափոխության ժամանակ :

Հենց այդ ժամանակ և , վոր բարյէկիների ու մենչեվիկների միջև վեճ և տեղի ունենում , թէ հեղափոխությունը ջախջախված և վերջնականապէս , թէ նա նորից պիտի բարձրանա : Մենչեվիկներն այնպէս եյին համարում , թէ բուրժուական հեղափոխության խնդիրները լուծվում են , իսկ բանվորական հեղափոխական չարժումը ջախջախված և : Դրա համար ել նրանք առաջարկում եյին լուծարքի յենթարկել անլեզալ կուսակցությունը , հարմարվել զոյություն ունեցող կարգերին , և աշխատանք տանել բաց-աշկարա կերպով , ցարական որենքների թույլատրած սահմաններում : Իսկ բայլէնիկները պնդում եյին , թէ անկումից հետո նորից

հեղափոխական բանվորական շարժումը, վոր Հեղափոխությունը պարտություն կրեց, բայց նա անխռուսափելիորեն նորից կրոնկի և կկործանի միապետությունը: Աւատի հիմնական խնդիրն է—ամբազնդել կուսակցությունը, պահել Հեղափոխական կազմակերպությունները, բանվոր դաստիարակին նախապատրաստել նոր կոխմների՝ ցարիզմի և բուրժուազիայի դեմ:

Պատմությունը լիովին հաստատեց բայց նիկների բնած գծի ձևությունը:

1911 թվին արդեն, ճղնաժամի վերջում, նորից սկսում և բանվորական շարժման վերելքը: 1912 թվի փետրվարին Լենոյի զեպքերը մի զոր խթան հանդիսացան բանվոր դասակարգի արթնացման համար: Բանվորական դործադուլների ալիքը աճում և և ավելի ու ավելի քաղաքական բնույթ ստանում: 1912 թվին գործադուլուրների կեսը մասնակցում եր քաղաքական դործադուլներին, իսկ 1914 թվին արդեն 1 միլիոն 337 հազար դործադուլուրներից մեկ միլիոնից ավելին քաղաքական դործադուլներ ելին:

1912—1914 թվերի գործադուլային շարժումն իր թափով հիշեցնում և առաջին Հեղափոխության ըրջանը: Թե ինչպիսի սրության եր հասել պայքարը, յերեսում և նրանից, վոր արդեն 1914 թվի ամառը Լենինգրադի գործադուլները բանվորներին զինված ընդհարման հասցրին վսութիւնության հետ:

Հեղափոխական վերելքի բազայի վրա նորից կենդանանում և արհշարժումը: Արագությամբ վերականգնում ևն փակված արհմիությունները և ծնունդ են առնում նորերը: Թեպես քաղաքական պայմաններն անբարենպաստ ելին արհմիությունների համար, ոյնուամենային նրանք մասսայական բնույթ են ստանում: Արհմիությունների անդամների թիվն աճում և: Զնայած Հետապնդումներին՝ միությունները ծավալում են իրենց գործունեցությունը: ամբազնդում ևն կազմակերպությունները և սերտ կազ են հաստատում մասսաների հետ:

Այդ ըրջանում, արհեստական շարժման մեջ պլազմոր գերն անցնում և արտադրական (ինդուստրիալ) բանվորների միություններին, վորոնք գտնվում ելին մեր կուսակցության Հեղափոխական գեկավարության տակ: Լենինգրադի ամենասահաջավոր և ուժեղ մեապազործների միության վարչության մեջ բնորդում ևն բայց ելիկներ:

ՄԵՆՉԵՔԻԿՆԵՐԻ լիկիլիուսատորական քաղաքականությունը սր-  
նանկանում ե : Բայց հետևի ազգեցությունը բանվոր դասակար-  
դի ու միությունների մեջ ավելի ու ավելի ուժեղանում և ամրա-  
պնդվում է :

### ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսական պրոլետարիատի աճող հեղափոխական չարժումը  
խախտվեց համաշխարհային պատերազմով : Ցարական կառավա-  
րությունը մի անգամ ևս վոչնչացրեց այնքան զժվարությամբ  
սահղածված բանվորական կազմակերպությունները :

Պատերազմի տարիներին համարյա ամբողջ խոշոր արդյունա-  
րքությունն աշխատում եր պաշտպանության գործի համար : Նրա  
մեջ զբաղված բանվորները զինվորական զըության մեջ դրվեցին :  
Վարչություններին իրավունք եր տրվել ուղղմանակատ ուղարկել  
բոլոր զժողովներին ու անհնարդանոներին : Դրա չնորհիվ աշխա-  
տանքի պայմանները վատանում և շահագործումն ուժեղանում եր :  
Բանվոր դասակարգի գրությունը որեցոր ավելի ու ավելի յեր  
ժամանում և նրա շարքերում ավելի յեր աճում զժողովությունը :

Բուրժուազիան, սահնջելով ուղղմանարերական կոմի-  
տեներ և այդ կոմիտեների մեջ քաշելով բանվորներին, ձգտում եր  
բանվորությանը դարձնել իր ողնականները՝ իր մոկոնած ավագա-  
կային պատերազմի ընթացքում : Այս գործում մենչեկի-պաշտօպա-  
նողականները նպաստեցին հոգուտ կազմակեանների : Բայց բան-  
վորական մասսաները նրանց հետեւ չգնացից չգնացին, այլ զնացին  
բայց հետեւ հետեւ զորակով մասնակից գնացին : Ենթադրությունը  
ամենահայտնի է այս գործում մասնակից գնացին : Բանվորական լայն  
մասսաները մենչեկիների հետեւ չգնացից չգնացին միանալու բուրժուա-  
զիային : Բանվոր դասակարգն իր ամբողջությամբ վճռականապես  
ուեմ գուրու յեկալ բուրժուազիային և իմպերիալիստական պատե-  
րազմին :

Նույն այդ ժամանակ, բանվորների գործադրության չարժումը  
սպառնալից չափերի յե հասնում : 1916 թվին գործադրությունների  
թիվը միլիոնից ավելի յեր, իսկ 1917 թվին միայն առաջին յերկու  
ամիսներին գործադրություններին մասնակցում էն 676 հազար բանվոր :

Քանի պարզվում եր ինքնակալության անվճան պատկերը, ամբողջ յերկիրն սկսում եր խուլ կերպով, խոկ հետո ավելի բարձր ու մորոշակի՝ արեկոծվել: Պատերազմի հետեւլանքով առաջացած տնահասական քայլացումը, թանգության աճումը, տնահասական ու քաղաքական ընդհանուր փլուզումը, ուղղմաձակատի պարտությունները, այս ամենը միայն ուժեղացնում էլին հեղափոխական խմբումը: Բանվոր դասակարգի և գյուղացիության ձնչման տակ և բանակի ակտիվ ուժանդակությամբ տապալվեց մինչեւ խորքերը մասած ցարական ինքնակալությունը:

## ԱՐՅԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՄՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Վրա հասան ազատության որերը: «Բայց դեռ չելին զազարել Փետրվարյան հեղափոխության վոլոցային ընդհարումները, յերբ մեկ մյուսի հետեւ սկսեցին ծնունդ առնել նոր բանվորական միություններ: Ամենց առաջ կազմակերպվել սկսեցին ֆարբիկողործարանային արդյունաբերության բանվորները: Քիչ չեր պատառում, վոր հին միության մհացորդներից, վորի մեջ մի քանի տասնյակ անդամ էլին հաշվվում, իսկ հաճախ ել սրազապես վոչնչից, մի քանի որդա մեջ միություն եր ստեղծվում, վորը մի ամսվա ընթացքում աճում եր կազմակերպչունեն և համախմբում իր մեջ հազարավոր ու տասնյակ հազարավոր անդամներ» (Տոմսի): «Միությունների կազմակերպումը լայն չափեր և ընդունում: Հուլիսին տեղի ունեցած արհեստակցական միությունների յերրորդ կոնֆերենցիան 1.475 հազար անդամ եր ներկայացնում:

Իհարկե, լայնացման այլպիսի հսկայական աճման պայմաններում միությունները չելին կարող շատ թե քիչ բավարար ձեռվ դնել իրենց առարատն ու կազմակերպությունները: Այնուամենայնիվ այդ ժամանակ միությունների նշանակությունը հսկայական եր: Նրանք անմիջապես պլույտարքատի տնահասական պայքարի զլուխ են կանգնենում: Միությունները զեկավարում են բանվորական գործադրությունը, բազմաթիվ կոնֆլիկտներում միջնորդ են հանգիստանում բանվորների ու ձեռնարկատերերի միջև, կարգավորում են փոխողնությունը, ամբապնորում են միությունական սպարագար, զարգացնում են կուլտ-աշխատանքը: Բայց արհես-

տակցական միությունների գլխավոր գործունեյությունը՝ կայունում եր պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարի մեջ։ Ճիշտ և, գեուես յերբարդ համառուսական կոնֆերենցիալին (1917 թ. Հուլիս) միությունները զգալի շափով գտնվում ենին մենչեւիշերի ազգեցության տակ։ Այդ կոնֆերենցիալին Արհեստական Միությունների Համառուսական կենտրոնական Խորհրդում բնարավեցին 5 մենչեւիկ և 4 բայլչերիկ։ Սակայն մենչեւիշերի այդ ազգեցությունն արտապատճյունը թուլանում է։

Փետրվարյան հեղափոխությունից հետո միություններին գույքանեռ կազմվեցին պրոլետարիատի նոր անտեսական կազմակերպություններ—Փարբիկ-գործարանային։ Կոմիտեներ։ Հանձննադրության պաշտպանության խնդիրը՝ կատարյալ կործանութիւնը։ Բանն այն և, վոր պատերազմի պատճառով խախտված արդյունաբրությունը քայլայիւմ էր։ Իսկ բուրժուազիան և նրա շահերին արտահայտող ժամանակավոր կառավարությունը, հարձակվելով բանվոր գտակարգի վրա՝ գիտակցորեն կազմալուծում ելին արտադրությունը։ Գործարկումներն առաջարկում են բանվորական հսկողության լուսնողը արտադրության նկատմամբ և հեղափոխական ճանապարհով իրականացնում են այն։ Բանվորական հսկողությունը, վոր անց կացրվեց կապիտալիստների համար ընդդիմադրության և սարուածի ուայշաններում, բանվորական մասսաներին հասցրեց արդյունաբրությունը պրոլետարական պետության կողմից ազգայնացման յևնթարկելու գաղափարին։

Գործարկումներում, նրանց սկզբնավորման հենց սկզբից, գեկավար գերը պատեկանում եր բայլչեիկներին։ Բուրժուական կառավարության դեմ և հանուն պրոլետարիատի դիկտատուրայի մղվող բայլչեիկյան աղխացիան սկսում և մուտք գործել բանվորական լայն մասսաների գիտակցության մեջ։ Արհմիություններն արագորեն աղափառում են մենչեւիկյան ազգեցությունից և վերջնականացեն կանգնում են բայլչեիկների կողմը։ Սեպտեմբեր ամսան արդեն, ժամանակավոր կառավարության կողմից հրավիրված գեմոկրատական խորհրդակցությանը, արհեստակացան միությունների պատգամամվորների 90%-ը դեմ եր բուրժուազիայի հետ գործակցելուն և կողմնակից՝ պրոլետարական դիկտատուրային։ Մեր կուսակցության—«Ամբողջ իշխանությունը խորհուրդ-

Ներին»—մարտական լողունքը դառնում և գործարկումների, ար-  
և հստակցական միությունների և ամբողջ աշխատավորության լո-  
պունքը:

## ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

Փիտրվարյան հեղափոխությունը մի անհրաժեշտ շրջանն էր  
միայն սոցիոալիստական հեղափոխության հանագարչին:

Արհևստակցական միությունների մեծամասնությունը ամե-  
նազործոն մասնակցությունն ունեցավ՝ բուրժուական կառավա-  
րության տապալման գործում:

Հոկտեմբերյան հեղաշրջմանը գործարկումները բացառիկ դեր  
խաղացին: Նրանք անմիջական մասնակցության անեցան կարմիր Գվարդիայի ստեղծելուն: Գործարկումները կարմիր Գվարդիայի շտաբն ելին հանդիսանում ձևոնարկություններում և հենց նրանք ել, Հոկտեմբերյան օրերին, կարմիր գվարդիական խմբերին դեռի  
բարրիկադներ ելին առաջնորդում:

Բուրժուազիային տապալելուց և իշխանությանը խորհուրդ-  
ներին անցնելուց անմիջապես հետո միությունները պրոլետարիա-  
տի ղիկոսատուրայի հիմնական սյուներից մեկն են դառնում: Լե-  
նինգրադում և Մոսկվայում Հոկտեմբերյան հեղափոխության  
հենց յիրկարգ որը արհևստակցական միությունների խորհուրդ-  
ները մի կոչով զիմեցին միութենական մասսային առաջարկելով՝  
ամրողապես պաշտպանել Խորհրդային իշխանությունը. այդ կոչը  
լիսություն արձագանք զարդ բանվորական մասսաների մեջ, վերջ  
դրվեց գործադուլներին, ձևոնարկությունների աշխատանքները  
կարգի ընկան: Արհևստակցական միությունների առաջ գրվեց աշ-  
խարհիս առաջին բանվորական պետության պաշտպանության և  
ամբաղղուման ինդիբը և նրանք պատասխան լուծեցին այդ խնդիրը: Լենինն ասում էր, թե «Առանց արհմիությունների, առանց նրանց  
վճռական ու նվիրված պաշտպանության պրոլետարիատի զիկուա-  
տուրան յիրկու շարաթ ել չեր կարող զիմանալ»:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԵԶ

Յերր նայում ենք այն ձանագարչին, վորով անցել և ոռւսա-  
կան պրոլետարիատը, տեսնում ենք, վոր նրա դասակարգային

ողայքարի բոլոր չըջաններում զեկավար գերը պատկանել և մեր  
կուսակցությանը :

Իր զարգացման ընթացքում պրոլետարիատն ստեղծում և մի  
շարք կազմակերպություններ—կուսակցություն, միություններ,  
խորհուրդներ, գործարկումներ : Բանվոր զասակարգի ուղեղը նրա  
կուսակցությունն և հանդիսանում :

Պրոլետարիատը պայքարում և լավ զինված և ուժեղ թշնամու-  
թեմ : Իր ազատագրման համար մղվող պայքարում պրոլետարիա-  
տը, բացի իր զասակարգային կազմակերպություններից, ուրիշ  
զենքեր չունի : Բայց վորպեսզի նրա պայքարը հաջող լինի, ան-  
հրաժեշտ է, որ ամրագղ զասակարգի և նրա կազմակերպություն-  
ների գործունեյության մեջ միանականություն լինի : Այդ կազ-  
մակերպությունները համախմբող ու նրանց պայքարին ուղղու-  
թյուն տվող մարտական շատրի դերը վերցրել և ու այժմ ել իր վրա  
յի վերցնում կոմունիստական կուսակցությունը : Նա ամենից լավ  
և ուսումնասիրել թշնամուն, նա ամենից լավ զիտի, թե վոր գեղ-  
քում ինչ կեաի վրա պետք և ուղեկ հարգածները, վորպեսզի կա-  
րելի լինի ջախջախել հակառակորդին :

Բանվոր զասակարգի կուսակցությունը սպայքարում և ամրագղ  
բանվոր զասակարգի շահերի համար, ընդգեմ կազմականացնելի  
զասակարգի՝ կազմականացնելի տիրապետությանը տապալելու և աշ-  
խատանքի լիակատար ազատության հասնելու համար : Արհես-  
տակցական միությունները հանուն սացիալիզմի մղվող պայքարի  
խոկական դպրոցները դարձան բանվորական լայն մասսաների հա-  
մար միմիայն այն պատճառով, վոր զեկավարվելով կոմունիստա-  
կան կուսակցության կողմէց, նրանք միշտ ել իրենց զործունեյու-  
թյունը կապում եյին դասակարգի ընդհանուր խնդիրների հետ :  
Միությունները ծնունդ եյին առնում և զարգանում մեր կուսակ-  
ցության աջակցությամբ, և նրա զարգափարական գրոշի տակ նր-  
բանք բոլոր վճռական բռպեններին կովի եյին բռնվում բուրժուու-  
ղիայի հետ : Դրա համար ել կոմունիստական կուսակցության  
14-րդ համագումարը լիակատար իրավունք ուներ ասելու թե՝  
«արհմիությունները ստեղծված և կառուցված են մեր կուսակցու-  
թյան կողմից : Կուսակցության զեկավարությամբ նրանք անել և  
լուրջ հաջողություններ են ունեցել» :

Ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղվող պայքարում ուսում-

կան պրոլետարիատը հաղթանակող յեղավ չնորհիվ այն բանի, վոր նա կռվում եր մեր կուսակցության զեկավարությամբ:

Առանց Կոմունիստական կուսակցության անկարելի յեր բարձուազիային հաղթել, անկարելի յեր նաև պրոլետարիատի զիկ-տառութան:

### ՅԻՌԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

#### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԵ

Հոկտեմբերյան որերին ուռւական պրոլետարիատը տապալեց բուրժուազիային և միանդամից վոչնչացրեց նրա ախրազեռության հիմքերը: Հողը, Փարբեկաները, գործարանները, յերկաթուղիները, բանկերը, խորհեցին կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքից և հարաբերարգիցին խորհրդային պետության սեփականություն:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո անցել և տասը տարի: Տասը տարի յե, մենք ապրում ենք խորհրդային պետության մեջ: Քննենք, թէ ինչ և խորհրդային պետությունը և, ամենից առաջ, ինչով և նա տարբերվում ուրիշ պետություններից:

Մեր պետությունը խորհրդային և կոչվում նրա համար, վոր այնուեղ ամբողջ իշխանությունը պատկանում և բանվարների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատղամավորների խորհրդներին: Խորհուրդների մեջ աեղ չունեն բուրժուազիան, կալվածատերերը և ցարական նախկին վոհմակի անդամները: Բոլոր շահագործող ու անաշխատ տարերերի մուտքն արգելված և խորհրդներում: Երանք իրավունք չունեն վոչ ընարելու և վոչ ընտրվելու: Դրա համար ել պետությունը կառավարելու գործի վրա նրանք վոչ մի ազգեցություն չունեն և ունենալ ել չեն կարող: Խորհրդային պետությունը կառավարելու գործը պատկանում և աշխատավորությանը: Խորհուրդների ընտրությանը մասնակցում են բանվարները, գյուղացիները, ծառայողները, այսինքն՝ միայն աշխատավորները և միայն աշխատավորներն ել իրավունք ունեն խորհրդի մեջ ընտրվելու:

ՄԵՆՔ պիտինք, վոր բուրժուական պետությունը դասակարգային տիբապետության գենք և մի խումբ կապիտալիսաների ձեռքում աշխատավոր բնակչության հոկայտկան մեծամասնության նկատմամբ :

Խորհրդային պետությունն իրականացնում և աշխատավորության շահերը :

Մեր յերկիրը չըջապատված և կապիտալիստական պետություններով, վորոնք կատաղորին առում են Խորհուրդների Հանրապետությունը և ամեն բոլե պատրաստ են մեզ վրա հարձակվելու : Պետական իշխանությունը մի գենք և պրոլետարիատի ձեռքում, ուղղված բուրժուազիայի դեմ, աշխատավորության սորտացնելու նրա բոլոր փորձերի դեմ :

Բայց պետությունների պես խորհրդային պետությունը և պատակարգային կազմակերպությունն է : Խորհրդային պետության մեջ աիրապետող դեկանար և ուղղություն ավող դերը պատկանում և ամբողջ աշխատավորության առաջազոր ջոկատին—բանվոր պատակարգին : Խորհուրդների միջոցով, ամբողջ աշխատավորության աջակցությամբ, պրոլետարիատն իրականացնում և իր դիկտատուրան :

Բայց ինչու մենք պրոլետարիատի դիկտատուրա յենք առում և զույթե ամբողջ աշխատավորության դիկտատուրա :

Այս հարցի պատասխանը տալիս է Լենինը . «Բուրժուազիային կարող և տապալել միայն պրոլետարիատը, վորովես հատուկ մի դասակարգ, վորի գոյության տնտեսական պայմանները նախապատրաստում են նրան այդ տապալման համար և ուժ ու հնարավորություն են տալիս անել այդ քայլը» : Մինչդեռ բուրժուազիան ջխառում, բաժան—բաժան և անում գյուղացիությանն ու մանրբուրժուական խավերին, պրոլետարիատին՝ նու համախմբում և, միացնում և կազմակերպում : Խոչոր արտազրության մեջ ունեցած իր տնտեսական դերի շնորհիվ՝ պրոլետարիատն է միայն, վոր ընդունակ է լինել ամբողջ աշխատավորության և շահագործվող մասսաների առաջնորդը, վորոնց շահագործում և բուրժուազիան, ճնշում, հաճախ վոչ պակաս, նույնիսկ ավելի քան պրոլետարիատին, բայց վորոնք ընդունակ չեն ինքնուրույն պայքար մղելու իրենց ազատագրության համար» :

Կասպիտալիստական հասարակության մեջ ունեցած իր գրության համաձայն պրոլետարիատը միակ հեղափոխական դաստիարդն և մինչեւ վերջ՝ Նա առաջին հերթին և ավելի, քան վորեալ այլ դաստիարդ, չահազրդոված և վերացնելու բուրժուական-կասպիտալիստական կարգերը։ Միաժամանակ նրա գրությունն ու դերը կապիտալիզմի սպայտաններում, նրա յերկար տարիների ընթացքում մզած պայքարը բուրժուազիայի դեմ, այս ամենը գարձրել են նրան ամբողջ աշխատավորության առաջնորդը։

Պրոլետարիատի վերջնական նպատակն է՝ վոչնչացնել դաստիարգերն ու իրականացնել սոցիալիզմը։ Այդ նպատակին համեմ նա կարող և միմիայն իր դիկտատուրայի միջոցով և միայն նա, միայն պրոլետարիատն է, վոր կարող և իրականացնել ամբողջ մարդկության ազատազրման այդ հսկա խնդիրը։ Ահա թե այդ սովորվ ինչ և զրում Վլադիմիր Խլիբչը։

«Ճնշված դաստիարգերից միայն այն դաստիարդն և ընդունակ իր դիկտատուրայի միջոցով վոչնչացնել դաստիարգերը, վորը տասնյակ տարիների ընթացքում վարժվել, համախմբվել, դաստիարակվել ու կոփվել և կապիտալի գեմ մզած գործադուրային ու քաղաքական պայքարի մեջ։

Միայն այն դաստիարգը, վորը յուրացրել և քաղաքային ամրող արգյունաբերական խոչոր-կապիտալիստական կուլտուրան, վճռականություն և ընդունակություն ունի պահել, պաշտպանել այն և զարգացնել նրա նվաճումները, մատչելի անել այն ամբողջ ժողովրդին, ամբողջ աշխատավորությանը։ Միայն այն դաստիարգը, վորը կկարողանա աանել բոլոր ծանրությունները, վորձանքները, անհաջողությունները, հսկայական գոհերը, վորոնք անիտուսագիւմորեն պատմականորեն դրվում են նրա վրա, ով իր կապերը կտրում և անցյալի հետ և համարձակ կերպով իրեն համար ճանապարհ և հարթում դեպի նոր հասարակություն։ Այն դաստիարգը միայն, վորի մեջ լավագույն մարդիկ ատելությամբ ու արհամարանքով են լցված գեղի մեջանականությունն ու (Փիլիստաներությունը) առորիությունը, այն հատկությունները, վորոնք ծաղկում են մանր-բուրժուազիայի, մանր ծառայողների և ինտելիգենցիայի մեջ։ Այն դաստիարգը, վորը անցել և աշխատանքի կոող ու կոփող դպրոցը և կարող և համակրանք ներշնչել դեպի իր աշխատանակությունը բոլոր աշխատավորներին, բոլոր աղիով մարդկանց»։

Խորհրդային պետությունը բուրժուական պետության հակառակությունն է : Մեր պետության մեջ ղեկավար ու տիրապետող գերքը գրավում է պրոլետարիատը, վորը կապիտալիստական հասարակության մեջ ամենաիրավագուրել ու ճնշված դասակարգն է : Նրա տիրապետության հիմքը խոչը արդյունաբերությունն է, վոր նաև խլեց բուրժուակայից : Խորհրդային պետությունը բանվորական պետությունն է :

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ՄԻԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական պետության նպատակն է՝ ճնշել շահագործվող աշխատավոր մասսաներին, պաշտպանել կապիտալի շահերը, ամրապնդել նրա տիրուապետությունը : Պրոլետարական պետության նպատակն է՝ պայքարել կապիտալիզմի դեմ, վերացնել շահագործումը, իրականացնել սոցիալիզմը : Բանվոր դասակարգի և բուրժուական պետության շահերը միանդամայն իրար հակաղիք են : Դրա համար ել բանկոր դասակարգի և նրա բոլոր կաղմակերպությունների հիմնական խնդիրն ե—պայքարել բուրժուական պետության դեմ : Պրոլետարական պետության և բանվոր դասակարգի շահերը վոչ միայն չեն հակառակ իրար, այլ և ուղղակի զուղուգիտվում, հանդիսանում են ընդհանուր ու միասնական շահեր : Դրա համար ել բանվոր դասակարգի հիմնական խնդիրը պրոլետարական պետության դեմ պայքարելը չե, այլ նրա պարզապահությունը, նրան ամեն կերպ ողնելն ու ամրապնդելն է :

Այն ժամանակից, յերբ ի դեմս իր պետության պրոլետարիատը տեր դարձավ արդյունաբերությանը, այդ որից նրա վեհարերմունքը դեպի արտադրությունը, ինչպես և դեպի պետությունը, արմատապես վոխվեցին : Պետական ձեռնարկություններում աշխատող բանվորները շահագործված են, վոր այդ ձեռնարկաւթյուններն ավել լավ, ամելի տնտեսաբար աշխատեն և ավելի շատ ու եժան ապրանք ատրադրեն : Ինչ չափով վոր աճում և աշխատանքի արտադրողականությունը պետ-ձեռնարկների աշխատավարձը :

Յեթե վորոշ բանվորներ գանցատվում են, թե իրենց աշխատավարձը ցածր ե, դա նշան չե, թե պետությունը շահագործում է նրանց, այլ դա ցույց է տալիս, վոր խորհրդային արտադրու-

թյունը դեռ այնքան չի ամբազնդվել վոր կարողանա ավելի վճարել: Չե վոր արգյունաբերության տերն ինքը բանվորն է, նու հաշվի յի առնում վոչ միայն տուանձին բանվորների տուրյա շահերը, այլև ավելի շատ հաշվի յի առնում արդյունաբերության և բանվոր դասակարգի շահերն ամբողջապես: Առանձին բանվորների տեղական շահերը զուգաղիսվում են զասակարգի շահերի հետ, իսկ վերջիններս առաջին հերթին պահանջնում են պետական արդյունաբերության ամբազնդումն: Պրոյետարիատը չի կարող անչափ բարձրացնել իր աշխատավարձը: Այդպիսի քաղաքականությունը հործանման կհասցներ ամրող արդյունաբերությունը և վատանի կյենթարկեր բանվորական պետության գոյության խնդիրը: Բանվոր դասակարգն իր արտադրածի վորոշ մասը պիտի թողնի պետության ձևոքին, արդյունաբերությունն ամբազնդելու և ընդլայնելու համար: Վորքան բարձր լինի բանվորքի աշխատանքի արտադրողականությունը, այնքան ավելի մեծ կլինի պետության մասը: Ճիշտ այդպես ել, մյուս մասը, վոր գնում և բանանությունը: Ճիշտ այդպես ել, մյուսը մասը, վոր գնում և բանվորության անհատական կարիքների բավարարության համար, կարող և աճել միայն այն շափով, ինչ շափով վոր աճի աշխատանքի արտադրողականությունը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը մեր ձեռնաբերկություններում, ամրացնում և խորհրդային արդյունաբերությունը, թուլացնում և մեր անտեսության մեջ յեղած կապիտալիստական տարրերը, բավացնում և մեր բանվոր դասակարգը դրությունը և մոռեցնում և նրան սոցիալիզմին:

Բանվոր դասակարգի և պրոլետարական պետության անտեսական շահերի միասնական լինելուն վորպես որինակ կարող և ծովայել 1927 թ. աշնանը խորհրդային կառավարության հրատարակած գեկրետը՝ պետարդյունաբերության մեջ զբաղված մի շարք բանվորների աշխատավարձը մինչև 10% բարձրացնելու մասին: Աւրիշ և վոչ մի պետության մեջ բանվոր դասակարգը այլպիսի գեկրետներ յերազնումն ել չի կարող տեսնել: Այլպիսի գեկրետներ կարող են լինել միայն բանվորական պետության մեջ, վորի անտեսական և քաղաքական շահերը պրոլետարիատի շահերն են, այն պետության մեջ, ուր պրոլետարիատն առաջին անդամ կապիտալիզմի ավելացների վրա սոցիալիստական հասարակության հիմքերն են դնում:

Ահա թե ինչու պրոլետարական դիկտատուրայի պայմաններում արհեստակցական շարժման հիմնական ու կարեվորագույն խնդիրը հանդիսանում է պետության ամրապնդումն ու միությունների անմիջական, ակտիվ մասնակցությունը բանվորական պետության այն բոլոր նախաձեռնություններին, վոր արվում ե սոցիալիստական շինարարության համար:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐՈՒԹՅԱՆԸ

Սոցիալիզմի կառուցումը մի քայլիր խնդիր է, վորն ամբողջ բանվոր դասակարգից սկահանջում է բարձր զիտակցություն և համառ աշխատանքի յերկար տարիներ: Սոցիալիզմի շինարարությունը հաջող կրնթանա միայն այն դեպքում, յերբ նա բանվորական ամենալայն մասսաների գործը կղանա: Այս միտքը չատ անգամ է կրկնել Վլադիմիր Խլիչը: Սոցիալիստական շինարարության գործում Լենինը հսկայական նշանակություն եր տալիս արհեստակցական միություններին: Միությունների միջոցով և, վոր բանվորական լայն մասսաները վարժվում ու քաշվում են նոր կյանքի շինարարության բոլոր ասպարեզները: «Անհրաժեշտ է ավելի ու ավելի ընդլայնել աշխատավոր մասսաների մասնակցությունը տնտեսությունը կառավարելու և նոր արտադրության շինարարության գործում: Յեթե մենք չլուծենք այդ խնդիրը, յեթե մենք արհեստակցական միությունները տասնապատիկ ավելի լայն մասսաների դաստիարակության որգաններ չլարձնենք քան այժմ, պետությունը կառավարելու անմիջական մասնակցության համար, այն ժամանակ կոմունիստական շինարարության գործը մենք մինչև վերջը չենք կարող հասցնել: Դա պարզ է մեզ համար» (Լենին):

Խորհրդային Միության մեջ դժվար թե դտնվի գոնե մեկ խոչընը գործարան, վորը բանվորական միջամայրից առաջ-քաշվածներ տված չլինի պետության և ժողովրդական տնտեսության կառավարման այս կամ այն մարդնեն: Խորհուրդներում և նրանց սեկցիաներում, ժողովրդական դատարաններում, կոոպերացիայում, գործարանային վարչություններում ու տրեսուներում և այլ հիմնարկներում, ամեն տեղ մենք կղտնենք բանվորներ, վոր գրավում են զեկավար դիրքեր: Ամեն տարի արհեստակցական

միությունները հազարավոր բանվորներ են ուղարկում տնտեսական ու խորհրդային աշխատանքի բոլոր առաջարեզները։ Սոցիալիզմի շինարարության գործում Լենինը բացառիկ կարիքոր եր համարում արհմիությունների գերը։

«Պատմության մեջ կատարված այս հոկայական հեղաշրջումով, յերբ պրոլետարիատն իր ձեռքն առավ պետական իշխանությունը, արհեստական միությունները խոչըրագույն բեկումն են ապրում իրենց ամբողջ գործունեյության մեջ։ Նրանք դառնում են նոր հասարակության գլխավոր ստեղծողները, վորովհետև այդ հասարակության ստեղծողների կարող են լինել միայն բազմամիլիոն մասսաները» (Լենին)։

## ԱՐՀՄՈՒԹՅՅՈՒՆՆԵՐԸ ՎՈՐՈԲԵՍ ԿՈՄԱԴԻԶՄԻ ԽՍԿԱԿԱՆ ԴՐՈՅՑՆԵՐ ՊՐՈԼԵՏԱՐԱՏԻ ԴԻԿԱՏՈՒՐԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Այստեղից արդեն պարզ է, վոր պրոլետարիատի դիկտատուրայի չքանում արհեստական միությունների գերն ու խընդիրները միանդամայն փոխվում են։ Լենինն ասում է թե՝ «աշխարհում ամեն տեղ արհմիությունների անցումը ստրուկի գերից կառուցողի գերի զարեկումն է (պերօմ)։»

Վորո՞նք են, ուրեմն, արհեստական միությունների խընդիրները պրոլետարիատի դիկտատուրայի չքանում։

Առաջիւ պես մնում է միությունների կուլտուրական ու կազմակերպչական աշխատանքը, վորը մեծ նշանակություն ունի և այժմ միայն լայն ծավալ է ատացել։ Առաջիւ պես մնում է բանվորների տնտեսական չահերի պաշտպանությունը, պաշտպանություն, վոր նոր պայմաններում իրականացվում է վոչ թե բանվորների պայքարով բանվորական պետության դեմ, այլ չահազարդությամբ մարմինների հետ համաձայնեցնելու և կարգավորելու միջոցով։ Սակայն գրանից զատ, պրոլետարիատի դիկտատուրայի չքանում արհմիությունների առաջ ավելի բարձր խնդիր և դրված ։ «մասսաներին կառավարել սովորեցնել վոչ թե զրքերով, վոչ զասախոսություններով ու միտինդներով, այլ սովորեցնել փորձով, այնպես անել, վոր շարունակ նորանոր բանվորական խավեր հանդես գան այն առաջավոր չերտի փոխարեն, վոր տվել և պրոլետարիատն իր միջից, վորին նա առաջադրել է կառավարել

և կազմակերպել։ Այնպես անել, վոր մեկ զործչի փոխարեն նույն այդ չերտից տասն այդպիսիներն առաջ գան» (Լենին)։

Լենինը հետեւյալ կերպ է բնորոշել արհեստակցական միությունները, վոր ցույց է տալիս նրանց յուրահասուկ զբությունը պրոլետարիատի գիկտատուրայի պայմաններում։ «Մի կողմից արհմիությունները, ամբողջապես ընդգրկելով, կազմակերպության շարքերը գրավելով՝ ինդուստրիալ բանվորներին՝ հանդիսանում են զեկավարող, տիրապետող, կառավարող դասակարգի կազմակերպությունը, այն դասակարգի, վորն իրականացնում է գիկտատուրան, այն դասակարգի, վորն իրականացնում է պետական հարկադրանքը։ Սակայն դա պետական կազմակերպություն չե, դա հարկադրական կազմակերպություն չե, դա դաստիարակող կազմակերպություն ե, դա առաջքաշիլու, սովորեցնելու կազմակերպություն ե, դա դպրոց ե, կառավարելու դրաբնություն, սննդավարելու դպրոց, կոմունիզմի դպրոց»։

Հենց սրա մեջ է կայանում արհեստակցական միությունների դորձունելյության խոչորակությն թեկումը։ Յեթե կապիտալիզմի չրջանում արհեստակցական շարժման հիմնական խնդիրը կապիտալիստական պետության տապալումն ե, ապա պրոլետարիատի գիկտատուրայի պայմաններում շարժման կարեսրակություն խնդիրը բանվորական պետության ամբանդումն և հանդիսանում։

Յեթե կապիտալիստական հասարակության մեջ միությունները սոցիալիզմի համար մզվող պայքարի դպրոցներ ենին, ապա բանվորական պետության մեջ արհեստակցական միությունները, կոմունիստական կուսակցության զեկավարությամբ, բանվորական լայն մասսաների համար կոմունիզմի դպրոցներ են դառնում։

## ԻՆՉՊԵՍ ՍՇԱԿԵԼ ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ

Առաջին գլուխ մշակումը պիտի պարզի արհմիությունների բնույթը, վորպես պրոլետարիատի գասակարգային կազմակերպությունների և միաժամանակ պիտի պարզի արհմիությունների դերը գասակարգային պայքարի մեջ։ «Արհմիությունները պրոլետարիատի գարգացման մեջ հոկայական առաջադիմություն են»։ «Այլ կերպ, քան արհմիությունների միջոցով, նրանց և բանվոր դասական կուսակցության զործակցության միջոցով, աշխարհում և վոչ մի տեղ չեղել ու չեր կարող լինել պրոլետարիատի զար-

գացումը» : Լենինի այս խոսքերն ընդգծում են այն հիմնականը, վոր կարևոր ե՝ միությունների գերն ու խնդիրները բնորոշելու համար : Դա ավելի պարզ չերևում է միուսաստանի բանվորական շարժումից, ուր պրոլետարիատը հոկայտկան հաղթանակի հասավ չնորհիվ իր դասակարգային տոկունության ու կազմակերպվածության, բանվոր դասակարգի ավանդաբարդ Համ . Կ (ը) Կ դեկավարությամբ» : «Արհմիությունների անցումը ստրկի գերից կառուցողի գերիւղար բնկումն ե» (Լենին) : Սրա հետ միասին մանրամասն պիտի պարզել արհմիությունների նոր հիմնական խընդիրները պրոլետարիատի դիկտատորության ժամանակ, յերբ դասակարգային հակասությունները չկան բանվոր դասակարգի և պրոլետարական պետության միջև, յերբ արհմիությունների գերը բնորոշվում է, վորպես խօսկական կոմունիզմի դպրոցների :

Գլուխը ուշագրությամբ կարդալուց հետո պետք է համառոտակի գրի առնել յուրաքանչյուր բաժնի հիմնական յեղակացությունը: Վերը բերված ամրող զեխի հիմնական մտքերը որինակ են հանդիսանում, թե ինչպես կաղմել այդ համառոտ յեղակացությունները: Յեթե ընթերցումը կատարվում է բարձրաձայն, խմբակի համար, ավելի լավ և պատճել հիմնական մտքերն ու յեղակացությունները և գրի առնվածը ստուգել կոլեկտիվորեն:

Ամբողջ գլուխն այդպես մշակելուց հետո պետք է մտածել ստորև բերված ստուգման հարցերի մասին: Դրանցից մի քանիսին պիտի դրավոր պատասխան տալ: Յեթե դասագրքի մշակումը կատարվում է խմբակում կամ պրոֆերազիոնության դպրոցում, հարցերին զրավոր պատասխաններ արվում են զեկավարի ցուցմունքներով: Յեթե դասագրքի մշակումը կատարվում է ինքնուրույնաբար, ապա անհարաժեշտ է, վոր գրվածը ստուգի տեղի պատրաստված ընկերներից վորեն մեկը կամ թե արհմիութենական աշխատառներից :

Այս զեխի մշակման մասին արված սույն դիտողությունները պետք ե հիշել և կիրառել հետագա բոլոր գլուխները մշակելիս:

## ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞րն և բանվորների դրության սուանձնահատկություններ կապիտալիզմի որով:

2. Ինչո՞ւ յեն անհաշտելի բուրժուազիայի և պրոլետարիատի շահերը:

3. Ի՞ւմ և ինչ հիմունքներով են համախմբում արհմիությունները .

4. Վո՞րն և արհմիությունների գերը պրոլետարիատի տնտեսական շահերը պաշտպանելու գործում, կազիտալիստական հասարակության պայմաններում :

5. Ի՞նչ դեր և խաղում պետությունը բուրժուազիայի տիրապետության ժամանակ :

6. Վո՞րն և պրոլետարիատի քաղաքական ու տնտեսական պայքարի կապը :

7. Ի՞նչո՞ւ յեն միությունները սոցիալիզմի համար մղվող պայքարի դպրոց հանդիսանում :

8. Ի՞նչ և ասել Լենինը միությունների գործակցության և կուսակցության հետ ունեցած նրանց կազի մասին :

9. Վո՞րն և յեղել արհմիությունների գերը բուրժուազիայի և ցարիզմի գեմ մղվող պայքարի մեջ :

10. Ի՞նչ նշանակություն և ունեցել գործադուլային պայքարը կազիտալիզմի որով :

11. Ի՞նչ գեր են խաղացել միությունները, Հոկտեմբերյան հեղափոխության մեջ :

12. Ի՞նչո՞վ և արտահայտվում կուսակցության դեկավար գերը պրոլետարիատի դասակարգային պայքարի ընթացքում :

13. Վորո՞նք են արհմիությունների հիմնական խնդիրները, պրոլետարիատի դիկտատորայի ժամանակ :

14. Ի՞նչո՞ւ արհմիությունները կոմունիզմի դպրոց են հանդիսանում :

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այն ընկերները, վորոնք կցանկանան առաջին զրույցում չուշափուած խնդիրներն ավելի մանրամասնորեն ուսումնասիրել և մշակել, պիտի կարգան ստորեւ բերված գրականությունը :

Մեկ աստղով նշանակվածներն ավելի հեշտ ու մատչելի գըրքերն են, իսկ յերկու աստղով՝ ավելի դժվարները :

---

## ԲԻԶ ՊԱՏՐԱՍՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- \* «Պրոֆգրագիստության քրիոտոմատիս» գլ. I, զրույց ա.
- \* Տոմսկի—Профсоюзы на новых путях (ներածությունը).
- \*\* Յա. Ֆին—Խուսափանի արհշարժման քսան տարին.
- \* «Профшкола на дому», вып. I урок 1-й.  
А. Алуф—Профсоюзы и Октябрьская революция.

## ԱՎԵԼԻ ՊԱՏՐԱՍՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- \*\* К. Маркс—Ницета философии гл. II, § 5,  
“Կոմունիստական Մանիֆեստ, «Պրոլետար. երություն» գլուխ”:
- \* Լինեն—Речь на III Съезде Союзов т. XVII, стр. 101—106
- \* „ „ Речь на Съезде текстильщиков, т. XVII стр. 106—110.
- \* „ „ Детская болезнь левизны в коммунизме т. XVII стр. 137—146.
- \* „ „ „Что делать“, глава «Тред-юнионистск. и социал-демократическая политика» т. V.
- \*\* А. Чекин—Учение о профсоюзах, гл. I и VIII.
- \* Б. Кремлев—Основы профсоюзной грамоты, гл. I и VII.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220025199



A 11  
25199

ԳԻՒԾ 35 ԿՈԹ.

104.